ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՁԳՏՈՒՄՆԵՐՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։

(Շարունակութիւն)։

Գրիգոր Տղայի այդ վերջին թուղթը մի հրաշալի ապացոյց է՝ թէ ինչպէս Հայոց կաթուղիկոսները հրապարակ էին կոչում իւրեանց վարդապետներին՝ զինակից լինելու ի պաշտպանութիւն Հայաստանեայց եկեղեցու։ Նա մերժելով օտար եկեղեցու վարդապետների խօսքերը, պահանջում է Հայոց եկեղեցու ս. Հայրերի գրութիւններով միայն պաշտպանել Հայոց դաւանանքը, սակայն լաւ գիտենալով որ հիւսիսային Հայոց վանքերը հարուստ էին հին գրչագրներով, դիմում է առ Տուտէորդին և նորանից վկայութիւններ խնդրում։ Նա գորանից բնաւ չէ քաշւում և համոզուած է որ ոչ թէ ոգիտութիւնն է ամօթ, այլ ամբարտաւանութիւնն ու ինքնահաւանութիւնն և կամ լսելը նոցա խորհրդին, որոնք ոչ գիտութիւն և պատրաստութիւն ունին և ոչ Հայոց եկեղեցու բարեկամներն են։ Այդ պարզ է, քանի որ Գրիգոր Տղան առ Ծերունի վանականն է դիմում միայն, որ բաւական տեղեակ էր իւր եկեղեցու վարդապետութեան և որ գլխաւորն է՝ ուրիշ անգամ արդէն յայտնապէս ցոյց էր տուել իւր թունդ նախանձախնդրութիւնն առ Հայաստանեայց պաշտելի եկեղեցին։ Հայոց կաթուղիկոսների այդ հեռատեսութիւնը շնորհակալութեան է արժանի, որ միշտ խորհրդատու են ընտրում այն անձանց, որոնք յայտնի էին լինում իբրև արժանահաւատ,

անուն հանած, այսպէս ասած՝ ցենդ ունեցող մարդիկ։ Այդպիսի անձինք անպակաս են եղել, բայց նոքա չեն երևացել, երբ մեր հայրապետները շրջապատուել են կուրացնող ինքնասէր մարդկանցից և անխնայաբար խաբուել նոցանից։ «Ես եմ ՅԱԹԷՆԱ» ասում է Գրիգոր կաթուղիկոսը, պահանջելով նորանից «Հնդկային պողովատիկ սուր և կամ ամրագոյն վահան, և կամ զրահ հաւատոյ»... Նա մինչև անգամ նորան իրաւունք է տալիս քննելու իւր գործունէութիւնը. «Եթէ տեսանես զիս մոլորեալ՝ զիս և զիմքս, եռա՛ հոգով.... «Եթէ որդի ես Աստուծոյ և ժառանգակից Քրիստոսի, վարդապետեա՛ ի վայրաքնակ տանս. աստուածավաճառ եթէ գտանիցիմք՝ ի բաց վարեա՛. եթէ Գամաղիէլ իցես ալեօք իմաստութեամբ պայծառացեալ՝ պատուական օրէնուսոյց լեր ժողովրդեանս»։

Քանի գեղեցիկ մտքեր են բովանդակւում այդ հակիրճ խօսքերի մէջ. այդպէս էին վարում Պալհաւունիներն, որ այնքան հրաշացան պայծառացան միջին դարերում և անմահ յիշատակներ թողեցին։ Կաթուղիկոսների պատիւը միայն այն ժամանակ է ընկել, երբ նոցա շրջապատողք շահասէր, պորտաբոյծ, անազնիւ մարդիկ են եղել և կամ թերուսներ և անկիրթներ...։

Յիշենք մի կէտ ևս, որ Գրիգոր Տղան վարանման մէջ էր ընկել, տեսնելով որ ամենայն առաջարկութիւն ընդունում են Յոյները. նա հեռանալ էր ուզում, զի հոգով հակառակ էր նոցա և համոզուած էր՝ թէ արտաքուստ այլ ինչ էին ցոյց տալիս՝ ներքուստ այլ ինչ. սակայն առիթ չէր գտնում սիրով հեռանալու նոցանից և բանակցութիւնը կտրելու, քանի որ՝ ինչպէս ասում է՝ «պնդեցաք ի խնդիրս աւանդութեանցն և լուծին յեռս չոգան, և ասացին ընդ մեզ առնել զամենայն՝ եթէ իցէ ինչ ի շահ օգտութեան. խնդրեցաք քաղաք և գաւառ տեղի անդորրութեան և խաղաղութեան սրբոյ աթոռոյս և կապ մարմնա՛ն սիրոյ ազգիս զմեծն Տարսոն. և յանձն առին. յուսով խոստացաք յանդիմանել զառ ի նոսա եկամուտ չարին ուղղել կանոնաւ. և խոստացան ընդունել իրրև ի սրբոց.....» Եւ ճշմարիտ, ամեն համաձայնութիւն տալիս էին, բայց Գրիգոր Տղայ տարակուսում էր.

ուզում էր հեռանալ այդ քաղաքագէտների ծուղակից, սակայն առիթ չէր ներկայանում։ Նա խորհուրդ էր հայցում իւր յարգելի ծերունուց. տեսնենք սա ինչ է գրում։

Այս երկոցունց թղթոցս որ յառաջնոյն գրեցան առ մեծ վարդապետն Գրիգոր որդի Տուտեայ[1], իսկ նորա ըստ իւրում իմաստիցն խոհեմութեան գրեալ պատասխանի զայս թուղթ։

Որք են ի մարմնի ցանկալի, ցանկալի է նոցա պատիւ և փառք թագաւորի հանդերձ իմաստութեամբ, և որք հասեալ ի դրունս մահու, փափագելի է ընդունել զառողջութիւն կատարեալ. իսկ ընտանեաց մեռելոյ գերագոյն քան զբան գործ յարութեան, որպէս Մարիամայ քեռն Ղազարու. սոյնպէս գտաւ կրել ի մեզ ի տեսիլ գծոյ մատանց աստուածազարդ և լուսաւոր քարոզչիդ բանին արդարութեան, և հօր հոգևորի տեառն Գրիգորի երկրորդ Լուսաւորչի, իմաստուն վերադիտողի բոլոր Հայաստանեայցս լուսաւորելոցս ի ձեռն սրբոյն Գրիգորի։ Զոր ընդ մաքրագունի կարկառման աջոյդ օրհնութեան եւ մեզ զողջոյն փրկաւէտ և խաղաղարար, զոր եւ ի շրթունս սրբեցելոյ հրեղինօքն լեզուօք Ցիսուս օծեալն Աստուծոյ, ընդ նմին զաւետիս ուրախութեան առողջութեան մարմնոյ սրբոյդ լուսազարդ հոգւոյդ խաղաղութեամբ, որ և հայցեմք մաղթանօք յաստուածընկալ սրբոյս պարագայծ ամօք պահել զկեանս ձեր ի պարծանս եկեղեցւոյ՝ անօրինել արժանահաս կատարմամբ զեղեալ հիմունս հաւատոյ, զարդարեալ արեամբ միացելոյն ի մարմնի Աստուծոյն Բանի, ըստ օրինակի նախնի քոյ հարց, և որք նոքին ճգնակիր հանդիսիւք գտան հաճոյացեալք ի կամս Արարչին, ծայրագոյն տեսակաւ և արդիւնական գործականաւ՝ լինել օրինակ բարութեանց, ի գլուխս և ի մարուս ի գրապանս պաճուճազարդ զգեստաւ գեղեցկալեալ. փեսային պսակելոյ յաւուր ուրախութեան սրտի իւրոյ ի թալպիաւթն[2] վերին, որոց հատուցումն բարեաց զբիւրապատիկն

---

1. Գրչագիրք ունին՝ որոյ ի Տուտեայ։

2. Այս երբայեցերէն բառ է, որ Գրիգոր Տղայի թղթում ևս գտնում ենք ի նմանութիւն Հայրապետական աթոռի ամրութեան, վերցրուած միակ՝

առցես ի կեանսն յաւիտենից։ Եւ վասն զի ըստ սովորակի աստուածախնամ խոնարհութեան մերոցն գրելոց հատուցիք շնորհ այդ ըստ օրինակի քո հօր և Աստուծոյ. զի խոնարհեալ ընթեռնոյր զգրեալսն և ընդունէր տնօրինաբար. թէ ոչ ո՞ կարէ ցուցանել զանկարօտդ յամենայնի ի կարիս գործի միոյ առարկութեան ի բանս ուսման և խրատու, յայդմ ոչ անգիտանամք, այլ ուսաք ընդելութեամբ հասանել ի համարձակութիւն. մինչ հողեղէն մարմնով ի մաքուր մարմին և ի հուր աստուածութեան. և մեք թէև ոչ տեսլեամբ մարմնոյ որում երկնայինքն են ցանկացեալ. սակայն ի ձեռն գրոյ քոյ և քաղցր հրամանաց բազում անգամ՝ որ թէ գտանիմք ինչ սղալ անձին. և մի մեզ լինիցի մեղադրելի՝ մանաւանդ խոստովանելի. զի ըստ ազատ բարուց Սորատոկլեայ՝ և ըստ յատուկ որդոցս յարևելից փոքր ինչ համարձակիմք ի բանս ճշտութեան։

Ա՛ղ վասնորոյ գրեցէքս զօժարութիւն կամաց ձերոց լինել ընդ ձեզ տեսլեամբ մարմնոյ. և օժանդակեալ բանիւ և կամաք ի գործ Աստուծոյ՝ սպասաւորութեամբ գլխոյդ և յոչ ժամանելն կրել աւաղականս՝ ընդ նմին և ղջկականս՝ այլ և սպառնական. աւաղական՝ զի փորձիւ ծանեաք զոչ բարեկամս. ղջկական՝ զի ոչ հանդիպեցաւ ըստ կամողիդ. սպառնական՝ առաքեալ յանցս ճանապարհաց՝ լնուլ զհարսանիս խառնամաղօք ի հանդիպումն գիպաց՝ և յայսմ ամենայնի կամ տրտմել մեզ իբրև փութոյ հեռացելոց՝ կամ՝ ղջմամբ տալ զասպաւանս ըստ օրինակի յանցաւորաց՝ թէ ոչ և ես արդարանալ՝ մի և երկիցս իրաւացի պատճառանաւ. և դու ընկալ որպէս օրէն է հարց որդոց արտասուելոց. թէ պատշաճ սպեղանեաց պատել զխխայթումն. կամ գիրկս արկանել և համբուրել ըստ գթոյ հօրն որդէսիրի ։, ապա թէ ոչ լինել անբարկանալի եղբօրն իրիցոյ՝ ոչ սայթաքելոյ միով իւիք

Երգերգոց. Դ. 4-ից. բառի իմաստն է բարձր մարտկոց թշնամեաց դէմ պաշտպանուելու համար՝ որում պատրաստի կախուած էին լինում ամենատեսակ զէնքեր։

։ Ղուկ. ԺԵ. 20։

ի պատուիրանաց հօրն բարեխոհի. մինչ յուլ մի յանասնեղէն մասին. թէ վասն առ ձեզ սիրոյ և իրաւացի հնազանդութեան հեռաւոր օտարաց և մօտաւոր բարեկամաց, հոչակեցիք գոհութեամբ իրաւ, զի ոչ գտաւ ինչ ի մէնջ, և ի մերոցս ստահակել բանիւ, կամ հակառակ ինչ գործել, և թէ ստացար բարեկամս. կամ գտաք ոչ աշխատեցաք ի ծախս կնդրկաց եկեղեցւոյ Աստուծոյ զարժան պարտսն հատուցաք՝ բանիւ գործով և արդեամբք հնազանդել քարոզչին, որում զհարկն և զմաքսն [1] յրսկրզման կոչման յաթոռդ սրբութեան, մինչ ցայս վայր հատուցաք և հատուցուք մինչև խսպառ։ Նախ գոհութեամբ Աստուծոյ զի ետ մեզ հովիւ արթուն և զուարթուն։ Երկրորդ հասարակ պաղատանօք ըստ իւրեանց առաջնորդաց։ Երրորդ որ ինչ ծառայական սպասաւորութիւն սրբոյ յաթոռոյդ. յիմ կրեա և կարծական մտօք անցս անցից յանձն քո. կամ տաս տարացոյց խռովութիւն եկեղեցւոյ և նշանակ բաժանական. թէ վասն զի ոչ ժամանեցաք հատանել զտարաշխարհ համատարած խռովասէր ազգի աղախնածնի Հագարու, որք են նախանձք [2] արեան արդարոց, և թշնամիք խաչին Քրիստոսի. այս առաւել քեզ խնայելի էր, և ներել մեզ տիրականաւ վարդապետական բանիւ՝ զայլոցն կամիլ առնել՝ և ձեզ նոցա։ Մարմնով ոչ ուսաք և ոչ տեսլեամբ զսէրն երկնաւոր. և զաստուածուսոյց խորհուրդ փրկութեան մերոյ, այլ մտօք և հոգով, ունիմք ոչ զամենայն ազգս երկրպագեալ տեսլեամբ վասն մեր խաչեցելոյն և յերկրի երևեցելոյ, այլ միրտութեամբ հաւատոյ. զի ըստ մարմնոյ և ոչ Խարայէլ, յորոց և Քրիստոս ըստ մարմնոյ. որպէս ոչ հրէայ և հեթանոս, այսպէս ոչ մտաւորք և ոչ հեռաբնակք. ոչ տեսեալք և անտեսք. նա երանէր ցնծացեալ հոգովն սրբով, որոց ոչ իցէ տեսեալ և հաւատասցեն [5], թէ այսու կենօքս շինի մեծ խորհուրդ եկեղեցւոյ։ Զի՞նչ առաւելութիւն սիրոյն Քրիստոսի, որով պարծիմք, ահա առ չարս և բարիս օրէնք բռնութեան, ասել սմա՝ եկ. և գայ, և ծառայի՝ առնել զայս և առնէ. բայց մեք ոչ այսպէս

---

1. Հռ. ԺԳ, 4։ 2. Միւսն՝ խանձ։ 5. Յովհ. Ի, 29։

ուսաք զՔրիստոս՝ զի և ոչ պաշտօն որբութեան եկեղեցւոյ ըստ մարմնոյ՝ այլ անդր քան զմիտս և զբան՝ աստուածայնովք զօրացեալք հաւատովք և օրինօք հնազանդութեան՝ մի պատճառասէր մնօք զիրաւացին աղաւաղել արդարութիւն. այո՛ բրբիւք զգուշասցիս՝ թէ և ոչ աթենացի աչք եմք՝ Գալիլիացի և ականջք ունկնդիր բանից 1՝ ձեռք գործնականք. թօթափել զփոշի ոտից ձերոց ի վկայութիւն ապստամբաց՝ չև հասեալ ժամանակ փորձոյ բարեկամաց. զիա՞րդ ծանեար ի հուր՝ երբ ժամանակ վշտի՝ և ոչ եղբարքս պիտանի՝ ոչ զոք ուսաք խոշորական վշտաց նեղութեան մարմնոյ մահու՝ և ապանմամբ անձին ցուցեալ զգործս սիրոյ. գիտեմք առ քեզ տօն ցնծութեան հարսին եկեղեցւոյ՝ և տխրութիւն տօնողիդ նաւակատեաց. բայց ուր սուր և գերութիւն և մահ կատարեալ՝ տեսցես իմաստուն մնօք և ներեսցես՝ ասելով՝ ամենայն որ ինչ իմ՝ ձեր է՝ և փառաւորեալ եմ ի դոսա 2։

Ո՞վ ի մերոցս գանիւ ընդդիմահար գտեալ ի հրամանս ձեր. զայդ ոչ ոք կարէ հաստատել բանիւ՝ բայց եթէ անուղղայք ոմանք յեկեղեցդ՝ որ ոչ ըստ պատուականիդ տէր Թորոսոյ՝ և հաւատարմին Ստեփաննոսի՝ և իշխանացն Կոստանդեայ և Վասլին. դու մի ունկն դնիցես՝ որոց ստութիւն է ի լեզուին և շոգ յերեսսն՝ որք յաւելուածոց սրտի խօսին 3 զՀայհոյութիւն ընդ անձին մարտնչելով կամին զխռովութիւն տանց եկեղեցւոյ Աստուծոյ՝ մինչ ուտել զկէս մարմնոյ և լինել արիւնախանձ՝ ի շրթունս հո՛ւր զարդ անիրաւութեան 4 և արդարև որդիք բարկութեան. բայց քեզ ուսուցանեն օրէնք պատկերի քո Հօր և Աստուծոյ ասել. ոչ գիտէք՝ որոյ պատրաստեցաք հոգւոյ. 5 այլ ոչ իջուցանել հուր ի կամս խնդրողին՝ այսքանեաց բազմութեան անձանց՝ մաքրեցելոյ բնակչաց ս. ուխտիս Աստուծոյ՝ եթէ մայրաքաղաք ոչ անձին շուք գնելով. այլ ի հարց քոց փառաւորաց և Քրիստոսապատակեալ թագաւորացն որ ազգէ տանն Դաւթի.

---

1. Ղուկ. Թ. 5։ 2. Յովհ. ԺԴ՝ 10։ 3 Մատթ. ԺԵ՝ 19։ 4 Յակ. Գ՝ 6։ 5 Ղուկ. Թ. 54։

զի պատուեալ մեծարեցին ըստ արժանի պատուոյ աստուածընկալ սրբոյ նշանին և ամենափառ կաթուղիկէ եկեղեցւոյն զբաղում գաւազանս իշխանութեան մի յարմարելով աթոռ քահանայապետութեան հաստատեցին ի փառս Աստուծոյ. կնիք հաւատարիմ եղեալ պատուոյն մեծութեան առնուլ զշնորհս կաթուղիկոսութեան ի սմա։

Որպէս Տէրն և Արարիչն ի ձեռն ամենորդւոյն, յաղագս որոյ չիք յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զնա.[1] ոչ մայրաքաղաք երկրային ըստ տարսոնացւոյն Սողոսի, այլ վերնախորան լուսոյ ըստ երկնաքաղաքացւոյն Պօղոսի, վերին Երուսաղէմ[2] ուր բանակք սրբոյ և թագաւոր թագաւորաց։ Եւ ամենայն նախնիք քո այսու անուամբ զարդարեցին առաւել պսակեալ ի ձեռս քոնովին անուամբ ոսկենկար գրով վկայութեամբ ասել և լինել, որ կայ և ունի, և կեցցէ մինչև յաւիտեան, ի վերայ անդրդուելի վիմին որ հատաւ առանց ձեռին ի պարծանս աշխարհի ի փառս Քրիստոսի և ի պահպանութիւն քրիստոսապսակեալ թագաւորիս և աստուածապահ զօրաց իւրոց։ Զիա՞րդ ի պարսաւս վերագրի սուրբն այն և առաւել սուրբ, անպարսաւելի անուն հաւատարիմ և կամ վասնո՞ւրոյ պատճառանաց. թէ վասն անոպայ ընակելոցս. և ոչ իսկ. զի են ի լուսաւորք ննջեցեալք բազումք, և կենդանիք որդիք լուսոյ, որոց ոչ վայրապար ալիք նորա ի Տէր, որ և հրեշտակաց պատկառելիք, թող թէ որդոյ մարդոյ հողեղինի, այլով տեսցես իմացական մտօք զսոսա լինել քեզ յառաջապահ ի մարտս և թիկնապահի վերջս, վահան և սաղաւարտ, և սուր յաղթեր յարհաւրայ գիշերոյ. և որպէս սկսար յիսկզբանն՝ այնպէս սիրով անօրինեա՝ իբր տուն հաւատարիմ և գանձարան ամբարեալ բարեացն. և եղիցի քեզ պարիսպ ամրութեան և տեղի վստահութեան ներքոյ և արտաքոյ։

Իսկ որ վասն Հռոմոց է քննութիւն հաւատոյ յոյժ ախորժելի էր մեզ զկնի այնր գրոց ոչինչ լսել իրաւ կամ անիրաւ. ոչ երկիւղի վասն, որպէս թէ կրեալ ինչ ի նոցանէ ամրացելոցս

---

1 Մատթ. ԺԱ, 11։ 2. Եբր. ԺԲ, 22։

անճառ միութեամբ բանին Աստուծոյ, այլ վասն ձեր աշխատա-
սէր մտօք գալ ընդ խոհերս նոցա. և երկամբք գրել վասն
անչատելոյն ի ճշմարտութեան հաւատոյ, ցաւէ մեզ վասն եր-
կուց տեսութեանց. մի վասն աշխատութեան մարմնոյդ. երկրորդ՝
վասն տկարացած կասկածանաց և գայթակղութեան տգիտաց.
բայց որպէս այժմու գրեալքս ծանուցին, հաւաստագոյն և յայ-
լում ժամու ստուգեցաք հաւատարմք: Հայ, յրսկիզբն անարմատ
խնդրոյն զձեզ ծանեաք տխոյեան, և ընդդիմամարտ պնդութեան
հաւատոյ ընդդէմ նոցա հակառակացն, և ի ձերոցն թէ գտանէր
սակաւ ինչ թողանալ բանիւ ի բանս նոցա, ձերով կարծրագոյն
բանիցն տեսականաւ իբր աղիւ համեմեալ առընդունէր հաս-
տատութիւն. զոր մեր համարելով զպարծանս աղգիս ամենայն
իրօք ասնն ցնծութեան և ուրախութեան ս. կաթուղիկէ եկե-
ղեցւոյ Աստուծոյ, յորդիդ լուսոյ և յախոյեանդ հաւատոյ. երա-
նի թէ մինչ յայսոսիկ էր կայումն բանիս ընթացիր. և մեք վասն
այսորիկ իսկ գրեցաք խորշել ի բաց գալ, որով և է պատճառա-
նաւ. զայս ոչ անգիտանաս դու՝ և որք ընդ ձեզ են իմաստուն.
զի այնք՝ որք յառաջ քան զքեզ սկսան հարքն քո, ոչ մեօք և
ոչ գիտելով մեր. զի ոչ ծանուցին թէ գործ է Աստուծոյ, և ոչ
գիտեմք զինդիր նոցա մինչև ցայժմ. և ոչ զխնդրելին ձեր՝ թէ
անարժանս համարելով և թէ հակառակս անգիտանամք. գիտո-
ղացդ է ասելի, վասն մերոյ Վարդանայ. յայտնի է պատճառ
հանդիպման. և մի հաւ գարուն ոչ առնէ ըստ առակին ի ձայնս
իւրում: Ցայնժամ զիարդ ոչ կոչէիք խնդրել զմարգարիտ ագա-
բակին [1] հաւասարութեամբ սիրոյ, կամ պարսատիկ սպառնալեօք
ըստ այժմուս ի ձեռն դահճաց: Խնդիրք ձեր ի նոցայոցն, ուստ
փորոտով և մազովն հանդերձ՝ տուեալ զգլուխն ի ձեռս նոցա
զաստուածացեալ մարմնոյն միութեան յի՞նչ բան բաժանել և
որոշել. և դուք պահանջէիք յաղագս ասնի և յայլոց օրինաց,
զի փոյթ վասն աւանդութեան ինչ օրինաց եկեղեցւոյ, եթէ ոչ
ունիմք զգլուխն Քրիստոս՝ յորմէ ամենայն մարմին յօգեալ և

[1] Մատթ. ԺԳ, 44.

պատշաճեալ ամէն զաճումն Աստուծոյ։ 4 Որովհետև տուիչ օրինացն և հաստատութիւն եկեղեցւոյ՝ ոչ ըստ մերոցն և մեզ, այլ ի կամս հակառակացն, ըստ Ժողովոյն Քաղկեդոնի և տոմարին Լևոնի։ Զայս միայն թողացուցանել մեզ, որ վասն անբաժ միաւորութեան Բանին և մարմնոյն. և զոր ասեն գիրս յատկականս դնել ի վերայ միոյն, և ոչ կերպի և կերպարանի, ոչ ժամանակաւ և ժամանակաւ. ոչ բարձրագունովք, և ի ստորեաւ կացելովք, և այլն ամենայն ներելի. զայս թողացուցեալ նոցա, կամ գողաբար յափշտակեալ կամին ընդ միտ մտանել գաղտնի նենգութեամբ. զի՝ նչ հաղորդութիւն կայ ասել կամ լսել ընդ նոսա։

Այլ որ յաղագս կատարեալ խնդրոյն նոցա, զերկուց բնութեանցն միաւորութեան մի ունիցիմք շփոթումն կամ պակասութիւն կրիցն անանգոսնելեաց. կամ թէ որպէս եկին առ միմեանս անճառ միաւորութեամբ զյատկութիւնսն ոչ կորուսին. և ձեր անգիտութիւն խոստովանել. այս և ո՞ւմ արդեօք գիտելի. երբ է և խոստովանի անճառութիւն, և զսրբոցն ոչ ընդունել զձայնսն ի վկայութիւն։ Բայց զարմանալ ոչ սակաւս մեր և նոցա ասել զսրբոցն այնոցիկ աստուածազարդից արանց քրիստոսասիրաց. թէ մեր սուրբն Գրիգոր, Սահակ և որք ըստ նոցա. զիարդ ոչ մեր Աթանաս, Կիւրեղ, Գրիգորեանքն, և որք ըստ նոցա. վասն ազգին լեզուին և քաղաքացն. ապա մարգարէքն Հրէից և առաքեալքն ըստ նոցա, և Փրկիչն ոչ ուրեք առաքեալ, այլ առ ոչխարս տանն Իսրայէլի, որ յԱբրահամէ, և ի Դաւթայ, ի Յովսէփայ, և յԱստուծոյ. ահա ընդունայն հաւատք մեր, և դատարկ աւետիք ուխտին, 2 ի Սահակայ Հօր մերում հաւատար այսմ Երուսաղէմի. այլ ասէ՝ Ժողովուրդ որ նստէիք ի խաւարի՝ տեսէք զլոյս մեծ գիտութեան. 2 և պարիսպ պղնձի այլուստ աստացեալ տեսօղի. եկեղեցի հեթանոսաց՝ որ այդ ևս հաստատեցան խարսխեալ. ել բանս այս ի հեթանոսս. այլ նոցա բարձի թողի զնոսա, և դարձուցիս զերեսս իմ (ի) նոցանէ, և անջրպետեալ ընդ խորանն և ընդ սեղանն. և դուք եղիջիք ուսեալք

---

1 Եփես. Բ, 20։ 2 Հռ. Դ, 14։ 3 Եսայի Թ, 2։

իբրև զՋուր բազումն, որ ծաղկեն, 1 և այլ ըստ Դաւթի և Եզեկիէլի, Ամոսայ և Զաքարիայ. և բացից զպատրուակ Հայկինն 2 և զՄազորթն 3 ի ժամանակի որք են այս։ «Զորս եռ Աստուած յեկեղեցւոջ, զառաքեալս, զմարգարէս, զվարդապետս, 4 որք հաւատացին յանուն նորա նոքա են որդիք նորա. վասն զի նոքա անհաւատութեամբ փշրեցաւ, և մեզ տուաւ շնորհս այս, խոստովանել զանքննին մեծութիւն նորա։ Դու զիարդ ասես ազգաւ և աշխարհաւ ունել զհարազատութիւն. թէ պաշտի ի նոսա բանք նոցա, և պատուեն անձինք արժանեաց որբութեան։ Զիարդ քաղկեդոնիտք, կամ որպէս նեստորիանոսք կամ մակեդոնիտք, և այլ և-ս չարեաց գտակք. մինթէ ասիցէ որք համախոհք կամ համամիտք, ընդ ազգին և ընդ լեզուին, կամ զի՞նչ այնքանեաց տաժանելի կիրք աշխատութեան որբոյն։ Ընդ ո՞ւմ, ընդ Հայո՞ց. ընդ Վի՞բս. ընդ Եբրայեցի՞ս. թէ ընդ Պարսիկս. ոչ ապաքէն առ իւրսն, և ընդ իւրեանսն. վասն զի գիտութիւն հպարտացուցանէ. գտեալ արտաքոյ սիրոյն կատարումն. մի՝ տգիտաբար յանդգնեցաւ անիծեալն Նեստոր, կամ դիւաբերանն Եւտիքէ, ոչ առաւելեալ տեսակաւ ի հասումն անճառելոյն. ի վախից մխեալք գտան՝ որոշեալք ի սրբոյն ի հաւատս ուղղափառ եկեղեցւոյ. յանձանց և յընկերաց կանոնական հրամանաւ՝ ոչ միով իւիք հաղորդել ընդ նոսա. մինչև յողջոյնն խաղաղութեան. վասն այնորիկ մեր են և ասեն, և հարք մեր հաւատոյ, ազգակիցք ըստ Քրիստոսի, և քաղաքակիցք, և քաղաքացիս ըստ միոյ ծնեալ որդոց Նոր Սիոնի. զոր ամբացեալք բանիւ նոցա, որք հոլովեցան յերկրի մերում, պարսաքարեալ սատակեմք զԴողիագ, և թէ էր և լինէր նոցա նոյին սիրով հատանել՝ հայհոյութիւն խաչելոյն բառնալ զնախատինս որդոցս Աստուծոյ։ Զի իւրովքն առաւել հաստատի ճշմարտութեան վկայութիւն և յանդիմանել կշտամբի ստութիւն, և թէ ոչ նոքօք, որովք այլովք արդեօք՝ զի չարք չարեաւ կորուսեալ. 5 և Ջրի բանք նոցա արտաքս ընկեցեալ.

1 Սաղմ. Ը, 13. Օր. ԼԲ, 20. 2 Համաստեղք (Օրիոն.) Յովբ. ԼԸ. 31. 3 Եբրայեցերէն բառ է՝ (Յովբ. անդ) որ է գիշերապահին կամ առաւօտեան աստղ։ 4 Կոր. ԺԲ, 28. 5 Մատթ. ԻԱ, 41.

որպէս գլուխ արթուն[1] ի Մովսիսէ ի նախատինս Իսրայէլի. ոչ պիտանացու ի կարգս բանից, և ոչ կարօտի եկեղեցի փրկեալ արեամբ Միածնին մերովքն փոխարկեալ բովանդակել. ի հաւատս, յոյս, ի սէր կատարեալ. Աթանասիւ, և ճշմարիտ վկայիւ ս. Գրիգորի, Կիւրղիւ և Արիստակիսեաւ, Գրիգորիւքն և Յահակաւ, Բարսղիւ և Մեսրոպաւ, Յովհաննու և Մովսէսիւ, Քրիստոսի. և Դիոսկորոսիւ, Պետրոսիւ վիմաւն հաւատոյ, և Պետրոսիւ Անտիոքու. Տիմոթէիւ, որդւովն Պօղոսի, և Տիմոթէիւ երանելւոյ. և որք այլ են համազգիք ըստ ուղղափառ դաւանութեան մերոյս խոստովանութեան. զի սոքա (յ)ետ Աստուծոյ պարիսպ ամրութեան և աշտարակք անյաղթելիք, անհասանելի և անճառ անօրէնութեան Քրիստոսի. և զի այսր աղագաւ հրաւէր կոչման ձերոյ ծանեաք և մեք. յորս առաւել թիկունս դարձուցանել. հեռանալ ընդ արևելս սիրելի է Աստուծոյ, քան զբազմաց արագութիւն ի գրգռութիւն մարմնոյ, սնոտի փառաց կենցաղոյս: Իսկ կոչել պատրաստութեամբ զինու պատերազմաց, չև փող պատրաստական և ձայն որոտման, և ճայթիւն վահանի, և ոչ իսկ ժամանակ խռովութեան, խնդրել սուր հնդկայինս. մի՛թէ ընդ օգս բախիցեմք, և ոչ ըստ օրինի պսակիցեմք, թողեալ զսուրն թերաքամ՝ զորոշողն օդոց և ուղղոց՝ զբանն Աստուծոյ, կամ կտրել և հատանել, ամրացուցանել և պահպանել, սիրոյն հաղորդութեամբ կոչել և ասել եղբայրս դասակցութեամբ վերնոցն ուրախ առնել զՏէր տաճարին. այս ո՛չ մարդկային մտածումն և ըստ կամս անձին յօժարութեան, այլ զօրութեան Աստուծոյ և գործակցութեան Հոգւոյն՝ որ կարող է ի քարանց յարուցանել որդիս Աբրահամու[2] ի դէպ ժամանակի խնդրել ի Տեառնէ, յարուցանել մշակս զօրագոյնս պատրաստել զազգս ամենայն իւրոյ չարչարանօք մարմնոյն ի կամս կոչողին:

Այլ ծանեայ զօրինակ աղաչանաց. զգիւտ կարծեօք պահանջելոցս, թէ զորոյ աստանօր առցուք դիմակս բանից յերկուցն խառնման, անշփոթ մնալ միութեան բնութեան, և անդէն մո-

---

[1] Եղք. ԼԲ, 20. [2] Մատթ. Գ, 9.

տակաւուր հատեր, տիգաւ խոցեալ, անընկալ լինել զորբոյ Հօրն և զախոյեանին հաւատոյ Դիոսկորոսի, ընդ նմին և զՑիմոթէի երանելոյ աշակերտի և գործակցի առաքելոյն, և զերեք—երանեան աստուածատես առնն Աստուծոյ, Պետրոսի վիմի փակակալի խորանին լուսոյ, որ գայլ և թափիչ անուամբ պարսաւի ի չարաց և պատուի յեկեղեցիս արդարոց. զի գայլաբար յափշտակեաց զՆօա Քրիստոսի, և իբրև թափչաւ լուաց զաղտ սեւաթուր մեղայ անհաւատութեան տոմարին Լեւոնի։ Թէ բանք Նոցա խոտելիք, արհամարհելիք, և բոլոր գիտութիւն ամենայն ուղղափառաց. կամ որ են բաղումքն արժանի ընդունելոյ քան զնոսա. թէ ոչ միաբան լեալ հաւասարին բանք Նոցա, ընդ բանս, ընդ միտս, ընդ կամս սրբոցն մերոց. այո՛ որպէս ոչ. ապա թէ կամք մի խորհուրդ և մի հոգի[1] ըստ աւետարանչացն սրբոց, ո՞րպէս ոչ կապեսցուք ի բանս Նոցա ճշմարիտս և հաղորդս սրբոցն։ Զի՞նդ անարգել արհամարհեսցուք Նոցա ի դէպ, զի խաւար փախչի ի լուսոյ, և ոչ գայ առ լոյսն, զի մի յանդիմանեսցին գործք նորա.[2] իսկ լուսաւորելոյ միութեամբ հաւատոյ երկամքք աշխատել ի նեղութեամբք չարչարանաց Նոցա պատուելիք, այլ և ասնելիք ընդ սրբոց առաքելոցն քարոզչացն ճշմարտութեան, որոց բանք Նոցա աղ անհամութեան, և պնդակազմ զօրութիւն լուծեալ ապականիչ, սր ոմանց բարի ագարակին, որում երկնայինքն ցանկացեալ ուսան զբազմապատիկ իմաստութիւն խորհրդեանն Քրիստոսի, որք յոչ իւրեանցն խոտեալ անարգեցան, զի իւրեանց ժողով սրբոցն՝ որք գնացին ի շաւիղս Նոցա և վկայեն միմեանց արդիւնք գործոյն հաւատոյ։ Այլ յօտար աղգի հեռացելոց ժողովոյն Քաղկեդոնի Բ. դէմն և կիրս, աստուածայինս և մարդկայինս, զառաջելոց, թէ Նոքա խոտեցան ՆեստորՊատուեցաւ, Թէոդոր փառաւորեցաւ, Թէոդոտն բարձրացաւ, և ասմարն Լէօնի ծաղկեալ պտղաբերեցաւ զպտուղն մահաբեր։ Տես քաջ մտօք և ուսո՛ Թէ առ ո՞ ունին զմիաբանութիւն. Թէ՞ առ չարան,

---

1 Եփ. Դ.4. 2 Յովհ. Գ. 20.

ոչ հալածէին իբր ազգակից և համախոհ. ահա հալածեալ ի չարաց գտան առ բարիս, որպէս Եղիա ի Բեթմուիլայ և հանգեաւ ի Սարեփթայ.[1] և անընկալ եղեալ որդին Դաւթի ի Հերովդիէ, ընկալաւ յԵգիպտոս, որպէս իմ Յիսուս խաչեալ ի Պիղատոսէ պատեալ ի Յովսէփայ, ըստ ընտիր օրինին Հրէից. առաքեալք հալածեալք ի փարիսեցւոյն՝ հանգեան ի հեթանոսս. ել ի վերայ լերինն բարձու Ոսիայ և տերևաշարժն Բիլոմնի, աւետարանիչդ Սիմնի. ձգեա՛ զձեռն քո ընդ արևելս, գոչեա զօրութեամբ և մի խնայեր,[2] ասել զԴիոսկորոս պսակ հաւատոյ զՏիմոթէոս լոյս եկեղեցւոյ, զՊետրոս տեսող Աստուծոյ և գտիչ կորուսելոց, ընկեր Աթանասի, նման Կիւրղի, հաւասար Գրիգորեանց, կերպարան Բարսղի, օրինակ բարի, մաքրութիւն ի հերձուածոց, Ոսկերերանն Յովհաննէս։ Զարդարեա՛ զանձն քո ի բանս օրինաց սոցա առաւել քան ի վկաան Ահարոնի, պսակեսցի գլուխ քո քան զքոյր քահանային. յեռ ընդ մասունս քո վկայեալ գրով, և փայլեսցիս քան զշափիւղայ. բանակք դատաստանաց շուրջ եղիցին զքեզ, և գեղեցկասցի պարանոց քո ըստ տատրակախօսն Յովհաննու. Պայծառասցին ընթացք լեզուի քո աւետարանել զհաւատս սնդուութեան. և առաւել հնչեսցին քան զզանկական Ահարոնի։ Եթէ այսպէս արասցես և դոյնպէս խօսեսցիս ի նրստիլ ի տան, և գնալ ի ճանապարհ կենցաղոյս, եղիցին քեզ և ամենայն եկեղեցւոյ երկինք նոր և երկիր,[3] արեգակն ոսկեճաճանչ աւետարանին մաքրութեամբ։ Եւ այլ ևս հասու եղելոց անապատն ընտանասցի, պատերազմն չարին լուծցի՝ պատերազմ բանիցն իմաստութեամբ սոցուն, որովք այլովք՝ քան եթէ սոքօք՝ մեր լինել խօսել և խրատել, յանդիմանել և հաստատել, թէ ընդունելի՝ գոհութիւն Աստուծոյ. և թէ ո՛չ՝ այսպէս գոհութիւն, վարձ զաւետարանչացն առցուք, գտեալ հաւատարիմ տնտեսք, արկեալ զարծաթն ի տրապիզիտն՝[4] լսել զ'ի վերուստ ձայնն. ի փոքուդ հաւատարիմ՝ իմերայ բազմիդ հաւատալ, մուտ յուրախութիւն երկնաւոր։[5]

---

1 Թագ. ԺԷ, 19. 2. Ես. ԾԸ, 1. 3 Ես. ԿԵ, 17. 4 Ցունարէն բառ է, որ է՝ (տրապեզա) սեղան (դրամափոխի). 5 Մատթ. ԻԷ, 23.

Այլ վասնորոյ գրեցէք զլուծումն ի խնդրոյ նոցա որ վասն երկուց բնութեանց անշփոթ ունել զմիաւորութիւն, և ոչ պակասութիւն յատկութեանց կրիցն անանգոսնելեաց, կամ որպէս եկին առ միմեանս անճառ միութեամբ և մնաց անկորուստ յատկութիւն նոցա, և հիացեալ ի բանս մեր նորաձևս ոչ ընդունել եկեղեցւոյ։ Այլ զձայնն տիրունի օրրստօրէ հնչմամբ ընթեռնուլ յեկեղեցիս, տաղս շարելով ի բազմաց զսակաւս օղս շղթային լինել վկայ. այլ և այլ որդւոց, որով երկուց բնութեանց հաւատանայ կիրք յատկութեանց։ «Հայր իմ մեծ քան զիս», և «անձն իմ խռովեալ» և հնարի ի Հօրէ անցնել բաժակին, մահու և հոգին յօժար, այլ մարմին տկար. ելանել որպէս առ Աստուած մեր և նորա. և իբր ի ծերունի հօրէ, թէ արդար, և թէ այլով նմանութեամբ տեղեկանալ զկրսերութիւն ի բնութեանց քան զՀայրն. կամ յո՞ր բնութիւն յՈրդւոյ ածեալ եկամտիւ խռովութիւն, և կամ յո՞ և յումմէ տաղթէր անցանել բաժակին, կամ թէ ո՞ր բնութեան կամք Որդւոյ ո՞չ հաւասարէր Հօր. և զո՞ր բնութիւն կոչէր մարմին տկար, կամ որ բնութեան Որդւոյ իցէր Հայր Աստուած։ Դարձեալ՝ թէ վասնորոյ հարկաւորեալ գալ խաչիլ այլովք վերագրաւ, յորս տիրոյն առ արարածս և լինել եղբարս։[1] Ո՞ Հայր պատուական ծեր մտօք և մանուկ հրաճաշակ և հրածին ի գործ Աստուծոյ. ասա ներեա՛ և լեր անմեղադիր սակաւ ինչ գրելոցս, և ապա առցես ոչ ի մէնջ՝ այլ հարց սրբոց զլուծումն խնդրելոյդ։ Զի թէպէտ և հրամայեցիք ոչ ի սրբոցն տալ զպատասխանիս, այլ մեք ոչ ունիմք իշխանութիւն և ոչ եկեղեցի՝ խօսել ինչ արտաքոյ կամացն Աստուծոյ, և որ ոչ նոցա և ոչ Հոգւոյն Սրբոյ, որպէս մինչև ցայժմ վարեցաք նոքօք խօսելով և շրթամբ նոցա, նոյնպէս եղիցի մինչև յելս կենաց մերոց առ ընտանիսն հաւատոյ և թշնամիս ճշմարտութեան՝ որք են լսողք և խօսողք նոր աթենայիք, կամ այլ հոգւոյ ընդունակք վերագոյն լեզուացն հրեղինաց. ասասցեն և ուսուցեն, թէ ի Հոգւոյ Աստուծոյ տացի բան գիտութեան և շնորհ իմաս-

---

1 Այս ամենը կրկնումն է Գրիգոր Տղայի հարցերին։

թութեան։թէ ոչ՝ անդէն դարձցի ողջոյն անօգուտ և սնափառակ։

Զայս անգիտացեալ տարակուսիմ զարմացմամբ առաւել քան զխորս գիտութեան մեծին Աստուծոյ, թէ զիարդ այս պատշաճի անիմաստ վերհիդ բանիւ ասել կամ գրով արձանանալ առ ի ձէնջ, մերձաւոր բարեկամաց կամ տարակաց հեռացելոց, մանաւանդ կաթուղիկէ թղթովք, ընդ նմին և յիշատակ հարցն ի Վկայասէրն Գրիգորէ մինչև ցձեզ, թէ սոքօք վարեցան և կայ յարկեղս կլայիդ, գիտեմք որով և հաստատեալ եմք, լինիմք աներկբայ սրտիւ, վկայ հաւատարիմ ամենայն եկեղեցւոյ լինել աներկբայ և անսղալ զմիտս ձեր ի ճշմարտութիւն ուղղափառ խոստովանութիւն հարցն, յանբաժանելի և յանմեկնելի միութիւն բանին և մարմնոյն, որով վկայեցիք լինել հայ հաւատով, բայց զայս ոչ գիտես տարակարծ գոլ տգիտաց, և պատճառ գայթակղութեան, ոչ իմաստնոց, այլ և համբաւակոծ արտաքնոց ուսման գրոց։ Այս ասելի և դիմադրելի խորհրդոյ երկաբնակաց պատշաճեալ յօդիւք ի միտս նոցա, տեղեկանան և ի մերոցս մանկունք տհասք առ ծերս ալեօք ի շահ օգտութեան լինել որոշող բանից մակագրելոց՝ զգուշութեամբ խրատու ծերոց, ոչ սայթաքեալ տգիտաբար մտօք յարքունական պողոտայէն և այն դուն ուրեք ի տան ի սենեակս օթոցի, այլ ոչ տժոք և ժամանակօք ժողովով և կոչնականօք հրապարակագուժ թև սքողելով զքոյս ցուցանել առտուածիմաստ և զայլս տարագրել տգիտութեամբ, մեզ ոչ գիտելով ի քոյոցդ պատուական մերձաւորաց և ոչ մի ինչ. ոչ գիր վկայութեան զմեծի և զաստուածաբանական որբարանի, յօրինելոցն երկուց լուսաւորաւն Մեղրկայ և Կիրակոսի Դրաղարկ կոչեցելոյ, և ոչ ներկեալ արեամբ Որդւոյն Աստուծոյ, որ Կարմիրն կոչի վանայ, ոչ ի Շաւիկրայ եդ և ոչ յարեգակնէդ կամ ի Պիոյէ։[1] և յայլ առանձնացեալ միանձանց, որք ընդ միտս և ընդ Աստուծոյ խօսելով կան հաստատեալ սնդութեամբ հաւատոյ, դասակցեալ հրեշտակաց, յարևելս միայն ձգեալ ձեռն և

---

1 Միւռն՝ Պիտոյէ։

գործ՝ ի վեր քան զկար զօրութեան մարդկան Աստուծոյ միայն բարւոյն և մարգասիրի, թէ լինիցի խաչիլ և տալ զխաղաղութիւն, չէ՝ և չէ՝ իսկ ընդհակառակս օ՞ն անդր և ո՛չ երբէք, և խնդրելին ի լուծութիւն։ Առաջին միջին և վերջին, ըստ մասին դիմակ հակառակաց։ և զի այլ է ասել ուսողին ճշմարիտ, և այլ փորձողի, և այլ և՛ս առաւել հակառակողին, ոչ գիտեմք՝ որոց պատրաստեսցուք ախորժակաց, ջուր և գինի ստամոքսին, թէ բուռ ընդ ջրոյ կերպարանօք կաթին, թէ կաթն և կոգի զուարթարար յորթոց խոյոց և զուարակաց։

Այլ մեզ ըստ ծայրագոյն տեսութեան մտաց՝ աստուածայինն նախապատուեսցին, հաճութիւն կամաց զորբոցն պատրաստել խումբս՝ սեղան ճշմարիտ միամօր որդւոց Սիովնի ի փառս և ի պատիւ՝ որ է և ունի այսպէս։ ¹

Յաղագս անճառ միաւորութեան բանին, բնութիւն ասել ոչ ուսաք յառաջագոյն ի գրոց Հին և Նոր Կտակարանաց, այլ և ոչ միոյ կենդանոյ մարդոյն յաղագս յոլովից ի սմա գոլ տեսակաց և լինելութեան։ իսկ ծանուցումն մեծի մարգարէին, անձամբարեալ դադարեցուցանէ՝ առաւել քան զչափս խնդրողի՝՝ զի հրաշալի հրամանօք և արթուն մտօք զբոլոր գոյացելոցն պատմէ յարմարութիւնս՝ և ընդհանուր կենդանեացն լռելով։ Ջկազմութիւն տիրական մարդոյն և զորպիսութիւն բանականաւն միայն իմանալի ձեռօքն պատուեցելոյ՝ կառուցելոյ մարմին։ զի հողոյ ասի կատարումն և շունչ և կենդանութեան հոգի այլուստ՝ և զդիարդն ո՛չ յայտնէ՝ զփոքրն անճառելի ցուցեալ՝ կարճելով զաստուածաշունչ գրոյ զ յայտարարութեան կէտն։ Ա՛րդ՝ զի շնորհօք ս. Հոգւոյն համառօտաբար զամենայն ստեղծեցելոցն երևեցոյց յայտնութիւն՝ բայց ո՛չ իրաւացի համարի զբնութեանշինութեանցն յարմարութիւն ուսուցանել։ վասն է՛ր։ զի վարժէր եգիպտական խրատուբ՝ և գիտէր զգուպարս ստեղծմանց և եղծից որ ի նմա։ Վասն այնորիկ ոչ ճոխաբանէ յինքենէ՝ մանաւանդ ասել յիթողացուցանել վերասացութեան պարգև՝ զգետնաքարշիցն իկիր

¹ 2 Օրէնք. ԼԲ՝ 14։

առնուլ զիմաստութիւն, այլ անսայթաք և ճշմարիտ սահմանաւ զաստուածային կամայն ցուցանէ նորակերտութիւն, և անընդդիմակայ զնոյն ի մարգարէից և յառաքելոց վկայեալ մատենից և ըստ արժանի մեծարին ի տիեզերական եկեղեցին։ Բայր յունական իմաստութիւն իբր յաղբերէ ընկալեալ ի Մովսիսէ ըստ տիրական պարապմանց իւրեանց՝ հաւանականս խօսելով ի միմեանց, և յաղագս ջերմութեան՝ ցրտութեան՝ ցամաքութեան՝ և խոնաւութեան, ի չորից լինել զբաղկացութիւն և զանձն եռամասն, գաստղութեամբ յաւելուածս և ի պակասութիւն ի զգայուն և ի շնչական կենդանւոջն. ի բանականումն և յանհատին փորձի, բնութեամբն անուամբն յեղանակելով։ Ընդէ՞ր ասի մի բնութիւն առ հասարակ օտարացեալ սեռի սահմանաւ. իսկ ի վերայ անհատին առաւել պարսաւի. իսկ ասէ՝ զի՞ և յոլովիւք մաքառիցիմք, քանզի մարմին ոչ է հոգի, և ոչ անձն՝ մարմին, և կիրք այլ և ոչ իւրաքանչիւրոցն և անղանկ և անշփոթ կցորդութիւն, և յայտնի այն ի բաժանմանն. այլ զի անճեղքելի և անանջատ պատկանեալ յարդարեցաւ տեսակն, թերևս անբաղաբար կոչեցաւ. մի զի [1] յիմանալի բացարձակութենէ զարմանազան ունի անբաժութիւն, և ի զատուցմանն ոչ և ս կարէ անուանել նոյն. այսպիսի իմն գաղափարաւ և արարչական Բանին երևի անօրինութիւն, թէպէտ ոչ կարեն զօրել միաք մեր, զի համայնագամայնիւքն գերազանցեալ և անյանկ է առեցելումն ի մէնջ անչափ իսկութիւն, քան զ'դրաշս է խոնարհիլն զծառային ընդունել պատկեր. ոչ ցելլով կամ սպառելով բացարձակութեամբ միոյն զմիւսն, այլ անմեկնելի հաղորդութեամբ։ Վասն որոյ պէտք է և յայժ ճահագոյն թուի խոստովանողաց մի բնութիւն ասելով, զի և յաչմէ նստիլն համեմատութիւն մի Տէր քարոզեալ. Բանն մարմին եղև. ասէ, և զծառային առնուլ նմանութիւն. զի զայն ուսուցանիցէ առնուլ՝ զոր ոչ ունէր, յոր չբռնագատեցաւ և ոչ ամօթ վարկաւ, յոր չէ անքակ, եղբայրութեան, եղբարս անուանեաց. ապա թէ այնչափ անկարելի համարին զմիաւորութիւն

---

1 Միւսն՝ զի մի . . . .

պարսաւելով զքաղցրութեամբ խոնարհողն յանշփոթութիւն և զանկումն բաստաբանելով՝ մի և ս վարեսցին ձայնիւ միաւորութեան՝ մանաւանդ գիմացն՝ որ ի կերպարանս Աստուծոյ էր՝ ասէ՝ զկերպարանս ծառայի էառ [1]. տեսանես զի կերպ և կերպ՝ զո՞ր արդեօք կերպարան եղծանիցեն ըստ նոցա դաւանութեանցն՝ զի թէ զբովանդակին խառնակումն պատճառին՝ զնոյն և գիմացն պարտին իմանալ ըստ առակին՝ «մի ստեղծանել գլուխ՝ երկուս բաժանել ստունս»՝ բայց զի՞նչ թաքնութեամբ վարել սրբոցն իմաստիւք յայտնութեամբ պարտ գոլ հրապարակել՝ անշփոթ և անբաժ ասել յետ միաւորութեան՝ և զանճառն թողուլ գիտել անճառելոյն այր և որդի Աստուծոյ՝ քաղցեալ՝ զնոյն և կերակրիչ՝ մեռեալ աստուածացեալ մարմնոյն՝ և յարուցեալ՝ ելեալ յանլոյծ կնքոյն՝ զմեղ վերացուցեալ նստոյց ի բարձունս՝ որ և առաքեաց զաւետիս. Հօր յոգիս արտմեցելոց՝ որք ընդհանուր սիրեցին զԲանն կենաց՝ ոչ վասն մարմնոյն աղօտացուցին փոքրկութեամբ և ոչ առաւել բարձրացուցին վասն Բանին։ Աստելոյն որ էրն ի սկզբանէ՝ զորմէ լուաք [2] ոչ բաժանելով՝ զի գիտէր զԲանն մարմին եղեալ և ընդ նոսա՝ և «ձեռք մեր շօշափեցին [3] զԲանն մարմնոյն միացելոյ՝ զի նոյն մարմնացեալ Բանն որ շօշափեցաւ մաքրեաց զսա՝ և ուր այլուր ասէ՝ ի սկզբանն զԲանն առ Աստուած [4]՝ զնոյն ճոխաբանէ»՝ «ձեռք մեր շօշափեցին»՝ «ոչ կարէ Որդի Մարդոյ առնել յանձնէ»՝ ոչ վասն տկարութեան՝ զի նոյն ինքն էր հաւասար՝ Հօր և ընդ Հօր։ Նոյնպէս և Պետրոս՝ «այր ցուցեալ յԱստուծոյ [5] մատնեալ և բևեռեալ՝ իջեալ ի գժոխս և ոչ ետես զապականութիւն։ Եւ փոյն տարոնացի «խօսեցեալ ընդ մեզ Որդոյն՝ սրբութիւն մեզաց մերոց տարեալ՝ լոյս փառաց և նկարագիր էութեան՝ նոյն անբաժանելի միութեամբ մարմնոյ նստաւ ընդ աջմէ Աստուծոյ։ Եւ դու ես քահանայ յաւիտեան [6]՝ մատուցող պատարագաց՝ որ է Որդի Աստուծոյ։

Արդ՝ ամենայն մարգարէական և առաքելական Բանք՝ հաւա-

1. Փիլիպ. Բ, 6. 2 Յով. Ա. 1. 3. Յով. Ա, 1. 4. Անդ՝ Ե, 30. 5. Գործք. առ. Բ, 22. 6. Սաղմ. ՃԹ, 4.

պարագոյն տան զօրինակ միաւորութեան։ Յաղագս որոյ հարքն աստուածայինք, որպէս Հայրն Քերդող, ոչ ճշմարտապէս գոյ ասել ումեք, մարդ կատարեալ զՔրիստոս բաժանապէս և զԱստուած Բանն բաժանմամբ և յեղյեղուկ ժամանակաւ, այլ առանց յեղլոյ և անբաժանելի, արտաքս քան զաս և զօրինակ, յետ անճառ միաւորութեան անշփոթ և անքակ բնութեամբ. նոցա է շփոթել և խառնակել՝ որ երկուս ցուցանեն կիրս յատկութեանց։ Եւ սուրբն Սահակ առասէ. «որ ոք, ասէ, այլ չարչարեալն և այլ անչարչարելին, և ոչ խոստովանէ զնոյն անչարչարելի Բանն Աստուած մարմնով չարչարեալ ըստ գրոց, ոչ յարմարի ի կարգ հաւատոյ ուղղութեան։

Իսկ Մեսրոպ երանելին «որ ոք ասիցէ, այլ Որդի ի Հօրէ, և այլ որ ի կուսէն, և ոչ ասէ զնոյն Որդի Աստուծոյ, և որդի Մարդոյ ի կուսէ, նոյնագոյ աստուածութեան անշփոթաբար, և ոչ համագոյ մարդկութեան, այլ Աստուած ճշմարիտ ի վերս քան զոկարութիւն մտաց և զաս գիտողաց։

Յովհան Իմաստասէրն՝ մեծ ախոյեանն հաւատոյ ասէ, «որոց արժանահաս ոչ բաժանել բնութիւնս ըստ ճոխութեան, կամ նուաստութեան ի վերայ Քրիստոսի, այլ միութիւն կատարեալ քան որ ոչինչ է կատարելագոյն այլ անորոշաբար վարել ի ձոյն գրոց. ոչ տալ երկուց դիմաց, կամ՝ երկուց բնութեանց, այլ յատուկ Աստուծոյ մարմնացելոյ իւր ինքեան, և ոչ բռնադատեալ։

Ասէ և Անանիա մերազգի. «մի ոք ասիցէ աստուածազգեաց մարդ զՔրիստոս, այլ ամենևին Աստուած ճշմարիտ միով բնութեամբ ըստ միոյ բնութեան երրորդութեան, և ոչ զառեալ մարմինն երկրպագեալ ընդ Աստուածն Բանի, և անուանել Աստուած, որպէս զի միս ի միսումն՝ այլ մի և նոյն ըստ անհաս միութեան նորա գործ ճարտարապետին իմաստութեան. այլ ի ձեզունս վարիլ քո հայր վարէ տեսչութիւն. կամաց գիտել և նոցա ջան վաստակոց, վասն այդորիկ յայտմհետէ վկայեսցեն և սիւնքն հաւատոյ և աշտանակքն եկեղեցոյ. թէ վասն էր եղև գալուստն, վասն միաւորութեան և յատկութեան կրիցն ամե-

նայնիւ, զի սակաւ գրեալքդ ոչ այլ ինչ, բայց զերկուսն հաստատել հաւատարմութիւն գործոյ մարդոյ և Աստուծոյ, զոր ոչ ասի և ոչ խոստովանի յատկական կրիւք յեկեղեցիս ուղղոց սրտից. տեսցես զիրքունդ ուշիմ մտօք, և ծանիցես զանհատն շրթամբք սրբոցն, զի երկաքանչիւրքն էր կորուսեալ, և նմանեաւն զնմանն ապրեցուցէ խաչիւն. և ի կամաւոր չարչարանս վարեցաւ մարմնով. և այսպէս խնդրելով և գտանելով, միացոյց և ապրեցոյց զկորուսեալն։ Իսկ անհետազօտելի յեղանակ միութեան, անճառելի հրեշտակաց և մարդկան, այլ տրկար օրինակաւ, որպէս հրացեալ երկաթ, և հուր, ծիրանիք ներկեալ և միացեալ, ասուն արեամբ խլխնճուն, նոյնպէս բանն մարմնացեալ, որպէս արեգակն, լոյսն, և ջերմութիւն իւր, զոր ի ձեռն Մարիամայ Աստուած բանն ոչ կարելով բնութեամբ աստուածութեան խոնարհիլ մինչև ի մահ, որ է պատկեր ծառայի, և Աստուած անբաժանելի, զի զմարդկութեանս չարչարանս իւր համարեցաւ չարչարանս, զորօրինակ էր անկարելի բևեռեալ զնա ի խաչին և պատեալ պատառակալաւ, և գնել ի գերեզմանի առանց մարմնոյ, նոյնպէս անկարելի էր նմա տրտմիլ առանց հոգւոյ բանականի. զգենոյր զբոլորն Աստուած բանն և զամենայն ձայնս անձնականս Աստուծոյ բանին ասեմք՝ զխռովիլն, զտրտմիլն, զաղօթելն, զ'ընդէ՞ր թողերն, և զակարութեան, ոչ յատուկ բնութեան աստուածութեան, այլ միաւորութեամբ անօրէնութեան։ Արդ՝ զորօրինակ զմարմինն իւր առնէ, թէ ոչ կերիջիք զմարմին իմ[1], նոյնպէս և ձայն անձին նորա. բանին ձայն տնօրինաբար, քանզի ինքն էր բանն, ձայնելով զմարմնոյն, զի մի առ աչօք կամ բաժանմամբ գոլ կարծիցի լսել ձայնին. «անձն իմ խռովեալ է»[2] ոչ ի մարդոյ, իբր ի մէնջ, այլ Աստուծոյ է ձայնս ասէ. որ ասէ՝ բայ. խռովեալ է անձն իմ. քանզի ասէ Աստուծոյ, ասացեալ է զաւերուածոյն եդից իբրու Ադամայ և սերովիմ և դարձաւ սիրտ իմ ի նոյն, և յուզեցաւ խնամ իմ. զի Աստուած եմ և ոչ մարդ. սուրբս ի միջի ձերում որպէս ոչ ծա-

---

1. Յովհ. Զ, 54. 2. Անդ՝ ԺԲ, 27.

նիցէ հակառակողն թէ նոյն նա է սուրբն, որ ասաց անձն իմ խռովեալ, նոյնպէս զղջանալն առ մարդն առաջին և առ տապանաւն աշխարհակեցոյց, յայտ է զղջումն վասն յանցուածոյ, և վասն արդարոցն որ գալ հանդերձեալ էին՝ զի մի կորնչիցին։ Նոյնպէս խռովիլն տրտմիլն և տկարանալն, յորոց ծանեաք թէ ոչ սոսկ մարդ, որ խաչեցաւն, բայց սուրբ Միածինն Որդի Աստուծոյ և Բան Հօր, և թէ վասն այնորիկ տկար բնութեամբ մարդոյ, զի ասէ՝ թէ «տրտում է անձն իմ մինչև ցմահ», ապա և հոգին չարչարելի, զի գոչէ առաքեալ, «մի տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ Աստուծոյ»[1]։ Եւ դարձեալ զշաբաթն, ձեր առեաց անձն իմ և որդիս ծնայ և զիս անարգեալ բարկացուցին[2]. զո՞ ա-նարգեցին, կամ զո՞ բարկացուցին, թէ ոչ անիրաւ է Աստուած, որ ածէ զբարկութիւն և յայտ է ահա՛ էր տրտմութեամբ ածէր զբարկութիւն, յորոց ծանիցի Հօր և Հոգւոյն ասել տրտմութիւն, այսպէս և Որդւոյ։

Այլ զի՞նչ մեզ աշխատիլ ի բանս ունայնս, որ ոչ ուտի առանց ալի, կամ ընդ Նեստորի անիծելոյ, ընդ Արիոսի պատառօղի, ընդ Պօղոսի Սամոստացոյ, Եւտիքեայ դիւաբախի, և Մակեդոնի հոգեմարտի, և Լեւոնի հայհոյողի, և ընկերաց նորա Թէոդորի-ոեայ, և Ցիրեայ, Դոմնոսի, և Յովհաննու Եգիպացւոյ՝ աղանդակցաց Նեստորի, Յոբնաղ Երուսաղէմի, և որք առին զայս խորհուրդ չարի Մծբին, Յիբաս, Ակակ և Բարծումայ, Սեւերոս պիղծ, որք հաստատեցին ի Քաղկեդոն՝ ընդդէմ ս. Ժողովոյն Նիկիայ, Կ. Պոլսի և Եփեսոսի։

Ապա թէ եղբարք են տարակարծ դատեցեալ ի մէնջ, զիարդ այդպէս դատապարտին՝ յանդիմանեալք ի սրբոցն, զոր ասես լինել իւրեանց։ Եւ կամ զիարդ այդչափ տաժանելի կրիւք վարեցան ի կենցաղումն, թէ՞ մայրք իմաստութեան, ո՞ւրպէս ոչ ուսան գրելեօքդ, ոչ մեր՝ այլ ինքեանց ըստ ձեզ։ Զի՞արդ զմինն յԱթանասէ վասն օրինակին մեզեր խառնեալ ընդ ծով, և սակաւս առնուն ի Գրիգորեանցն և յայլոց, զբովանդակն աղաւաղելով[3] մե-

---

1. 1. Թեսաղ. Ե, 19։ 2. Ես. Ա, 1։ 3. Ի գրչագրին՝ աւաղաւելով։

ռացմամբ, ո՞չ ապաքէն զիւրեանցն հաստատելոյ աղանդայեղծ մարդադաւան կռապաշտութիւն։

Ասացեր սրբոցն ոչ գոլ այլ և այլ ասել մեզ և նոցա. արդար. վասն զի մի է Հոգին. ապա եթէ արդարև ճշմարիտ հարքն սուրբք, ո՞ւր գտանի առ Բ. ընութեանցն յատկաբար կրիւք ընդունողաց և ասողաց հաւատարմայեալ բանք նոցա կամ պաշտեցեալ։ Ոչ է Հաղբատեցի, կամ Սանահնեցի. ոչ յԱյրարատոյ և յանպարսաւելոյն յԱնոյ. ա՛ռ ընկա՛լ ի սրբոցն և տեսցես սուտ համարել նոցա, ոչ ճառս յաճախապատումս, այլ գուշնաքեայս համառօտես զ'ի բազմաց իբր կաթիլ մի ի համատարած ծովէ և զիր ընդդէմ ասողացն։ Ոչ իբր լրումն թերացելոյ գրեցաք, և անգէտս խորոց իմաստութեանց, այլ յակամայ կամն հարկեալ ի պահանջողէդ, զոր ընկալեալ՝ թողցես զմեզ հանգչել։

Ասէ սքանչելին Աթանաս. «խոստովանիմք զնա Աստուած գոլ, և Որդի Աստուծոյ, և Որդի Մարդոյ ըստ մարմնոյ ոչ երկութիւնըս զմի Որդին, այլ մի բնութիւն Բանին մարմնացելոյ, և երկրպագելի մարմնով իւրով, և ոչ երկուս, այլ ոմն Որդի Աստուծոյ ճշմարիտ, և այլ ոմն ի Մարիամայ մարդ ըստ շնորհի Որդի Աստուծոյ եղեալ, այլ զոր յԱստուծոյ, որպէս ասացի, մի Որդի Աստուծոյ և Աստուած զնա. այդ ծնեալն ի Մարիամայ Որդի Աստուծոյ բնութեամբ, և Աստուած ճշմարտապէս, ոչ շնորհիւ և հաղորդութեամբ ինքն նոյն Որդի Աստուծոյ և Աստուած, չարչարեալ վասն մեր մարմնով, անչարչարելի մնացեալ և անայլայլելի աստուածութեամբն»։ Եւ Երենիոս. «եկն Որդին Աստուծոյ և զգեցաւ մարմին, անմեկնելի և անորիշ ըստ կրից և ներգործութեանց միութեան. ոչ որիշ և ոչ այլ և այլ, այլ նոյն մի»։ Դարձեալ նոյն Աթանաս. «արդ՝ եթէ այլոյ մարմին՝ այլոյ և չարչարանքն։ Իսկ եթէ Բանին մարմին, քանզի Բանն մարմին եղև, հա՛րկէ և զմարմնոյն չարչարանս ասել նմա՝ որոյ մարմինն է։ Իսկ որոյ չարչարանքն՝ նորին և նշանագործութիւնքն. վասն այնորիկ ոչ այլոյ, այլ Տեառն ասի չարչարանքն, զի և շնորհն առ ի նմանէ, քանզի զնա ասացին գիրք աստուածային խաչեալ ի Պիղատոսէ. զնա ասացին Աստուած, զնա ասացին մարդ, զնա

Որդի Աստուծոյ, և Որդի Մարդոյ, զնա յերկնուստ, զնա անչարչարելի և չարչարելի, ոչ այլ և այլ երբէք, այլ մի և նոյն»։ Ասէ Յուլիոս. «ոչ մարդ էր՝ որ ծնաւ Մարիամ, և ոչ մարդ զոր հրէայքն խաչեցին, Աստուած ծնեալն ի կնոջէ, Աստուած խաչեալն ի հրէից»։

Գրիգորիոս Աքանչելագործ, «եթէ ոք, ասէ, այլ չարչարեալն է, և այլ ոչ չարչարեալն, և ոչ խոստովանի զնոյն զանչարչարելի Աստուածն Բան մարմնացեալ և չարչարեալ. և չարչարելի մարմնովն յարուցեալս զգնացս յԱստուած առնելով. նատի ընդ աջմէ Հօրն մարմնովն՝ որով ասէր որ էն յերկինս. հեռի է յուխտից աւետեացն, և օտար՝ խորհրդոյ եկեղեցւոյ»։

Իսկ Պրոկղ երանելի. «քայց նզովեմք՝ որք բնութեամբ չարչարելի ասեն զաստուածութիւն և մարդ սոսկ զնաչեցեալն, և ոչ բոլորովիմբ էութեամբն Աստուած։

Երենիոս հեաւոդն առաքելոցն ընդդէմ Կողարբոսի, «որք ըստ անկարելիութեան և երկեղի ասեն տրտմել Քրիստոսի և աղօթել. յորմէ, ասէ, երկնչէր հզօրն և Արարիչն, ս. առաքեալքն ցուցանէին ի գրոց, զԲրիստոս խաչեցեալ զնա գոլ՝ Որդի Աստուծոյ. իսկ որք հեղձուն և բաժանեն զՊոբովամուն, կրեսցես պատուհաս»։

Եփրեմ սուրբ. «Հրէայք զմարմինն խաչելով՝ զԱստուած խաչեցին, զի և ոչ մի ինչ է բաժանումն Բանին և մարմնոյ նորա յաստուածային գիրս. այլ է մի բնութիւն, մի դէմք, բոլորն Աստուած և բոլորն մարդ, նոյն ինքն էութիւն նորա։ Ասէ և գործողն սքանչելեաց, «ոչ Բ. բնութիւնք և ոչ Բ. դէմք, քանզի և ոչ քառ երկրպագեմք զԱստուած, և զՈրդին Աստուծոյ, և զմարդն, և զՀոգին Սուրբ, էր Աստուած և եղև մարդ, ոչ հեռացեալ ի բնութենէն և ոչ քայքայեալ ի մարմնաւորութեան. այլ որ էրն՝ նոյն եկայ անփոփոխելի, և անայլայլելի, ինքն յինքեան և ոչ ինքն ի մարմնի, այլ մարմին յԱստուածումն, և Աստուած մարմնացեալ. ոչ մասամբ այլ բոլորովին. ոչ երկուութեամբ, այլ միութեամբ անբաժանելի, կամաք Հօր և Սուրբ Հոգւոյն գոյութիւն Բանին մարմնացեալ»։

Լուսաւորիչն սուրբն Գրիգոր. «որք ի մարմինն հաւատացին, ծանոյց նոցա զաստուածութիւն իւր, և որք ի մարմնոյն գթեցին, ուրացան զաստուածութիւն նորա. քանզի միացաւ ի մարմնի բնութեամբ, և խառնեաց զմարմինն ընդ իւր աստուածութեանն, որք յայնմ հաւատոյ վրիպեցան և զբաղումս ի ճշմարիտ հաւատոյ թիւրեցին գային և ոչինչ»[1]։

Եւ երանելին Թէոգնեստոս Անկիւրեայ. «քանզի որովք զատուցանես զմիւսն ի միւսմէն, նովիմբ և զմիութիւն լուծեր. զի՞ և զ՝ վերլուծանես զիրական անօրէնութիւն երկուս իմանալով՝ զմիութիւն անարգելով. թէ միաւորես բանիւ, մի հատցես իմացութեամբ։ Իսկ եթէ հատանես իմացութեամբ զմիաւորութիւն բընութեանցն, որոշելով ուրացար. մի քններ մտածութեամբ, քանզի ոչ մնայ հրաշափառ Բանն. եթէ ճանաչեսցի՝ հաւատայ թէ եղևն, բայց զ՝զիարդ եղևն թողցես ներգործողին»։

Եւ աստուածախօս աստուածաբանն Գրիգորիս. «Յիսուս Քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեանս. ճոխն աղքատանայ. վասն զի աղքատանայ իմով մարմնովս, զի ես ճոխացայց նորա աստուածութեամբն. լցեալն թափի, քանզի թափի յիւրմէ փառացն առ փոքր ինչ, զի ես ի նորա լիութենէն առիցս»։ Եւ որ առ Կղեմդիոս ճառին՝ «այլ և այլ յորոց փրկիչն. թէ ոչ նոյն է աներևոյթն և երևելին, անժամանակն և ընդ ժամանակաւն՝ ոչ այլ ոք և այլ մի լիցի. վասն զի մի են երկոքին, խառնելով Աստուծոյ և մարդանալով, և մարդս աստուածանալ և կամ ոք անուանիցէ»։

Ապա մեծն և փառաւորեալն Կիւրեղ ի հաւատոցն Գիրս. «ետես զնա կոյրն ոչ մերկ և ոչ անմարմին, այլ ըստ նմանութեան մերում, և հաւատաց յայն որ ետես. ոչ իբրև որդի ընդ որդւոյ միաւորեալ, այլ իբրև մի բնութեամբ և ճշմարտութեամբ Աստուած։ Արդ՝ որք բաժանեն զբնութիւնսն յետ միանալոյն՝ յայտնի երկուս որդիս կամին ցուցանել. իսկ աստուածաշունչ գիրք յետ անճառ միաւորութեան եթէ լմնանուէլ, և թէ այն ինչ ասիցէ՝

---

1. Ագաթ. Լէ. միայն կիսատ պռատ է վերցրուած։

ոչինչ ընդհատ իմանամք, որպէս Աստուծոյ բան, և տեսչութեամբ խոնարհեալ ի մեզ»։

Երկրորդ է և Աստուածաբան. «կարօտացաք Աստուծոյ մարմնանալոյ և մեռանելոյ, զի կեցցուք. յոլովք են սքանչելիք ժամանակիս. Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ, չարչարակցելով Արարչին»։ Եւ որ յաղքատութեան ճառին. «քարւոք են աղօթք և տքնութիւնք. և հաւանեցուցանէ Աստուած տքնել և աղօթել, նախ քան զչարչարանս, և ոչ ուրուք բնութիւն մարգոյ, և կիրք յատկութեան»։ Եւ առ Կղեմաիոս. «եթէ ոք ոչ երկրպագեսցէ խաչելոյն, նզովեալ եղիցի»։

Իսկ Եփրեմ. ս. կոյսն զմարմինն ծնանելոյ, զԲանն ծնաւ, և է աստուածածին, և Հրէայքն զմարմինն խաչելով զԱստուած խաչեցին»։

Դարձեալ Աստուածաբան յայնմ ճառի որ առ ի պատճառս հաւատոյ. «թէ ոք մարգածին զկոյսն դաւանէ՝ և ոչ աստուածածին. կամ թէ յերկուս յորմէ բնութիւնս ի միմեանս, մի որդի պատճառելոյ. և երկաքանչիւրոցն որոշէ զիւր ներգործութիւնսն, իբրու թէ մարմինն զիւրն կրէ ակարութիւն, իսկ աստուածութիւնն զիւրն բացակատարէ սքանչելիս, որ է յայտնապէս Բ. ամբարշտել որդւոց, և որ ի կարգիդ։ Ահա ոչ որիշ է բնութիւն, անձին խառնութեամբ կամ ակարութեամբ։

Եւ մերն Լուսաւորիչ՝ «թէպէտ զկերպարանս առ, այլ խառնեաց միացոյց, զի զմեզ անքակս արասցէ յանմահութիւն աստուածութեան իւրոյ. Միածին, Աստուածորդին հզօրակիցն, որոյ կորոյս զչարն նոյին մարմնոյն պարտաւորեաց զմեզս. զինչ կամեցաւ՝ եղև և որպէս կամեցաւ՝ արար, և խառնեաց յանխառն աստուածութիւն, զի զբնութիւնս մեր անապականս գործեսցէ»։

Մեծն Աթանաս ի թիւտին որ առ Սիրիոն և Սատերիոս. «վասն որոյ ոչ այլ էր նախ քան զԱբրահամ Որդին, և այլ յետ Աբրահամու, և ոչ այլ յարուցիչն Ղազարու, իսկ այլ հարցողն վասն նորա, այլ նոյն էր աստուածաբար յարուցանողն նորա»։

Երանելին Կիւրեղ Երուսաղէմի. «Աստուած ճշմարիտ Որդի Աստուծոյ. ո՞վ ոք ասէ մարդ կատարեալ բաժանապէս զՔրիստոս,

և զԱստուած Բանն. բաժանմամբ, և ոչ խոստովանի մին Քրիստոս անբաժանելի. և կամ բաժանէ բնութիւնս ճոխութեան կամ նուաստութեան, և ոչ բնութեամբ միութիւն, նա ոչ վարի ըստ հարցն աւանդութեան, և հեռի է յաստուածութենէն Միածնին»։

Զինչ և Աթանաս առ Յուբիանոս թագաւոր. «քանզի միանգամայն մարմինն Աստուծոյ Բանին է մարմին, և հոգեւոր և բանական, քանզի ի նմա և զանձնաւորութիւն ունէր. ուստի ճըշմարտապէս, մանաւանդ յիրաւի նորին Տեառն ինքեան. և ոչ այլոյ ուրուք յղացումն խոստովանեալ լինի, զի նախ կինն, ապա ընդ նմա Տէր աստուածապէս, և յայնժամ ի նմանէ, նոյն ինքն տնօրինաբար մանուկ. վասնորոյ կոյս է մայրն՝ որպէս զաստուածածին սուրբն Մարիամ։ մի ասա պարտ գոլ ասել և խոստովանել Որդւոյ զբնութիւն և զանձնաւորութիւն մարմնաւորեալ, և կատարելապէս մարդ կացեալ. և որ զայս ոչ ասէ՝ աստուածամարտ է և պատերազմող հարցն սրբոց. դու ո՞րպէս պահանջես յատկութիւն բնութիանցն։ Զի և ասէ Աթանաս. «իսկ յորժամ եկն լրումն ժամանակին՝ արտաքս՝ առաքեալ զՈրդին իւր՝ որ եղև ի կնոջէ, և գոլ զնոյն Աստուած, և Որդի Աստուծոյ ըստ Հոգւոյ, և Որդի ըստ մարմնոյ. ոչ Բ. բնութիւնս, զմինն Որդի, զմինն երկրպագական և զմիւսն ոչ. այլ մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ, և երկրպագեալ հանդերձ մարմնոյ իւրոյ միով երկրպագութեամբ»։

Եւ իմն երանական Տիմոթէոս. «ահա ս. աւետարանիչքդ և և տառք մարգարէից ինքներևութեամբ Քրիստոս լցեալ, ոչ Բ. բնութիւնս օրինադրեցին մեզ խորհել ի Քրիստոս, այլ զնոյն քարոզեցին Աստուած նախայաւիտեան, և զնոյն տնօրինաբար մարմնոյն եղեալ Աստուած. զնոյն չարչարեալ և անչարչարելի, զնոյն Աստուած զնոյն մարդ»։

Երենիոս Ագռնացի. «ս. գրութիւնք գիտեն զՔրիստոս որպէս մարդ գոլով, այսպէս ոչ գոլով մարդ. և որպէս մարմին, այսպէս հոգի և Բան Աստուծոյ և Աստուած. և որպէս ի Մարիամայ ի վերջին ժամանակս ծնաւ, այսպէս անդրանիկ արարածոց, և որ-

պէս քաղցեաւ, այնպէս յագեցոյց։ Եւ որ ծարաւեաց, նոյն և արբոյց։ և որ վաստակեաց, այսպէս զվաստակեալսն հանգոյց։ Որ խռովեցաւ՝ խաղաղացոյց։ տրտմեցաւ և ուրախացոյց։ Եւ որպէս որդի Դաւթի՝ նոյն և Տէր Դաւթի։ և որպէս մարդ, այսպէս և Աստուած և Որդի Աստուծոյ։ Եւ որպէս թաւք ընկալաւ, այսպէս և վիշոյ հոգւոյ։ ոչ այլ ոք որ կրեաց զայս, և ոչ այլ ոք որ պարգևեաց զայն, այլ նոյն ինքն մարմնացեալն Աստուած ամենայն յամենայնի կարող և պարգևող։ որ չարչարեցաւ վասն մեր, թաղեցաւ միացեալ մարմնովն և աստուածութեամբն, որ էր անբաժանելի յիւրմէն մարմնոյն միով բնութեամբ։

Եւ ս. Եփրեմ ասէ. «յաղօթս կայր ի Գեթսեմանի, ոչ վասն իւր՝ այլ առ ի լնուլ զպէտս իւրաքանչիւր առ ի Հօրէ, և տեսանէր սատանայ զՔրիստոս, և գողացուցանէր զնա ահ նորա։ Վասն այսորիկ և Տէրն աղօթէր և տկարանայր, թողացուցանելով զլար կարթի վիշապին, զի երևեսցի հաղորդութիւն բռնաւորին։ Ապա կապեսցի իբրև ձագ հաւու՝ և խաղամն նորա ի նաւս ձգնորսայ»։

Յովհան Ոսկեբերան յերրայեցւոց թղթոյն մեկնութեան. «Քրիստոս ոչ կարօտանայր Հօր, այլ ճոխաբանութեամբ առնէր՝ զինչ և կամէր. դու նախ զայս խոստովանեա թէ ոչ կարօտանայր Հօր, ապա ես ցուցից քեզ յաղօթս կալ զիջանելով էր վասն մեր, զի ոչ առ կարօտութեան կայր յաղօթս, այլ վասն զմեզ յորդորելոյ, և չէր ինչ ի Հարկէ խաչիլ, այլ կամաւ փրկել զմեզ. ինքն կամօք խաչեցաւ»։

Եւ Երենիոս, «արդ որ ոք ի բաց որոշեն զԲանն Աստուած ի Յիսուսէ, զոր և անչարչարելի ասեն, երկուս անձինս յայտնեն. քանզի թէ ոմն չարչարեցաւ, և ոմն անչարչարելի մնաց. ոմն ծնաւ, և ոմն ի ծնեալն էջ, երկուք այլ ոչ մի ցուցան. բայց մի է ծնեալն և չարչարեալն Յիսուս Քրիստոս։ Եւ նոյն Միածին Որդի Աստուծոյ, զի գիտէր Միածինն զբաժանումն Բ. բնութիւնն ասողացն. ի պողոյ նոցա զգուշացուցանէր, և պատուղ զբաժանումն ցուցանէ, այլ զՔրիստոս ասել և այլ զԲանն. իսկ առաքեալքն զայլ՝ Քրիստոս, և զայլ ոք Բան՝ ոչ գիտեն, այլ զխաչեա-

լրն և գչարչարեալն. զԲանն իսկ եղեալ մարդ՝ զԲանն ասացին Քրիստոս զեղեալն մարմին՝ զմիութիւն քարոզեցին՝ զի Բանն մարմին եղև. Որդին Աստուծոյ որդի մարդոյ. մաքուրն մաքրապէս զմաքուրն բացեալ յարգանդ. զի միշտ նոյն ինքն Բանն Աստուծոյ իմանայցի եղեալ մարդ. ընդ սոսա և վերին դասապետութեանցն քննիչ։

Դիոնէսիոս. «ոչ մարդ էր Քրիստոս՝ և ոչ որպէս ոչ մարդ՝ այլ որպէս ի մարդկանէ մարդ գերազանց՝ և ի վեր քան զմարդ՝ և ճշմարտապէս մարդ եղեալ. և այնուհետև ըստ Աստուծոյ. ոչ զաստուածայինսն ներգործեալ և ոչ զմարդկայինսն ըստ մարդոյ. այլ այրացելոյ Աստուծոյ՝ նոր իմն և աստուածայրական ներգործութեամբ ընդ մեզ քաղաքավարեալ. այլ չար աղանդքն հակառակ այսոցիկ. զօրութիւն ի ներքս ծածկեալ՝ թագուցին ի գիրս սուրբս՝ զի անչատեալք քակեսցեն զՅիսուս Քրիստոս ի Բանէն՝ և պատառեսցեն զմիութիւն անբաժանելի արտաքոյ կամաց Արարչին և հարցն սրբոց դաւանութեան՝ և հաւատոյ ուղղափառ խոստովանութեան՝ և դրութեան այսքանեաց՝ աստուածազարդ և հոգիընկալ արանց»։

Այլ մեք հետևեալք սոցա և ուսեալք ի ձեռն գրոց սրբոց՝ ասեմք թէ մի է Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ՝ միով երկրպագութեամբ գերապատուեալ՝ զի ոչ զմարմինն բաժանելով երկրրպագեմք՝ և ոչ զԲանն երկրպագելով հեռացուցանեմք ի մարմնոյն՝ այլ ճանաչելով զԲանն մարմին եղեալ՝ գիտեմք Աստուած. և այսպէս խոստովանեմք քարոզեմք և ուսուցանեմք. բաւականասցուք սոքօք սակաւ գրելովքս՝ ըստ կանոնական հրամանի. ոչ առնել զանձն մեծիդ կրել աշխատութիւն՝ գիտելով ձեր ինքեան զարտայայտեալ ճառս բազմաց՝ և զգիրս սրբոց երանելեաց և կամ որքան ընդ ժամանակս ժամանակս գրեալ թուղթք են նոցա առ մերսն երանելիսս՝ և յայլ ազգս՝ և պատասխանիք մերոց սրբոցն և այլոցն՝ որք կան յարկեղս գրոց ձերոց՝ զորս ունիք ի նոցունց տեղեկանալ՝ են անբաւ և անհասանելիք բազմաց քննողաց՝ անթերի լրմամբ յարկեղս աստուածաբնակ սրբարանաց մերոց՝ որք են կարող տալ պատասխանի՝ ընդդէմ հպար-

տացելոցն յոլորտուտ [1] կարծեաք իմաստից, զի ծանեաք ի գրելոցս չլինել վարդապետաս խառվութեան զսուրբսն Աստուծոյ, և ոչ երկդիմի մտածութիւն ի կամս նոցա, մանաւանդ թէ ոչ հոգւոյն սրբոյ. այս ճշմարիտ. զի ի միոյ աղբերէ արբուցին զլուրն կենդանի բղխեալ յԵրուսաղէմ. վասնորոյ մի յարմարեցաւ լինել եկեղեցի ընդ տիեզերս ամենայն ճգնավաստակ կրիւք. նոցա, որք գտան երկրորդ զկնի Աստուծոյ, մեզ նոցա և ամենայն եկեղեցեաց։ Բայց մի անգիտացես զժողովն Քաղկեդոնի և զտումարն Լևոնի, զհակառակս Աստուծոյ, որք անարգեալ զգանձն հաւատոյ և մոռացեալ զուխտն աստուածեղէն՝ հաւանեցան Նեստորի, և այլ ամենայն չար տանոյ վիշապին մարդասպանի, զոր սրբոցն արեամբ չափ պատերազմեալ. թէպէտ լցին արեամբ զեկեղեցի, և հայհոյութեամբ զՔրիստոս առ ոչինչ համարեալ՝ զհարցն ի մեզ հաստատեցին ուղղափառութիւն հաւատոյ։ Գտան մեր ամենայն սուրբքն առաջինքն ընդ Դիոսկորոսի և Տիմոթէի, և ոչ նոցա. ապա թէ ոչ մեր, աղաչեմ և ես առնել գիտունս յայտնի բանիւ, զի անծանօթ գրելով հեռաբնակ վայրիւք, յոլորտս հիւսիսական սայլին, և ոչ ներհունք ի տուր և առ հարցուածս բանից. թէ դոքա որպէս դնեն բաժանումն Բանին և մարմնոյն, և կիրս յատկանս նուաստութիւն և բարձրութիւն, թէ ըստ հին գրելոցն, յայտնի են մեզ, որովք ատելութիւն կատարեալ ատեցաք. թէ ըստ նոր ծանուցելոցս ի ձէնջ, նոցին խոստովանութեամբք բնաւ ոչ ընդունիմք, զի հուր բարկութեան ծածկեալ է ընդ յարդի, և ոչ հաւասարեն ընդ բանս այդքան վերագրեալ սրբոցդ Աստուծոյ։ Վասն զի ամենեքեան ցուցանեն բնութիւն բանին Աստուծոյ յետ անճառ միաւորութեան կրիցն և ներգործութեանցն, զօրութեանցն և տկարութեանցն. զի Աստուած մարմնացաւ, և վասն միոյն խօսեցան Քրիստոսի, և ոչ մեզ և նոցա, այլ Աստուծոյ և վասն Աստուծոյ, և մեք այսպէս ուռաք և կալցուք մինչև յաւիտեան. ոչ երկուցեալք ի սպառնալեաց և ոչ պարսաւեալք փոքրաբան տգիտութեամբ։ Հաւատով բարձրացեալք իբր լեառն պարարտ, պատրաստեմք մատուցանել զքանքարն տէրունի, տասամբք բո-

[1] Միւսն յոլոր սուտ։

վանդակեալ թուոյ և ակն ունել լինել բարի և հաւատարիմ բազմին իշխանութեամբ. և այլ ինչ խորհոդացն արտաքոյ երիցս. ժողովոյն ոչ հաղորդիմք, և ոչ եղբարս ասեմք և ոչ հաւանիմք ումեք, թէ և հրեշտակ յերկնից աւետարանեսցէ, զի զոր Բանն Աստուծոյ կատարեաց ըստ օրինի պատերազմեալ արամբքն քրիստոսասիրացն մեք ոչ ընկալաք եղբարս կոչել և գիրկս արկանել. զի և ոչ հայրն զենու զզուարակն պարարեալ, զի մերձեալ է ժամանակ կապեալ ձեռօք արկանել ի խաւարն արտաքին, և ոչ կարօտիմք բերել սուր հնդկային, և ոչ պողովատիկս ծեփորային։

Կայր գրեալ եթէ ծեր աթենացի տալ պատասխանի, և կամ լինել օրէնսուսոյց ժողովրդեանն. կամ ընդունակ Հոգոյ և Որդի Աստուծոյ, առնել հմուտս զվարժս աթենական իմաստիւք. լռութիւն Զենոնի բաւական էր յուսումն Աղեքսանդրի, զի ժամանակ է խօսելոյ, լռելոյ որպէս և ի խնդիրդ զոր ունիս։ Եւ մեզ տգիտացս և մոլորելոցս, գիտեմ ոչ յայտնիլ Հոգւոյն և առնել օրէնսուսոյց. սարսափիմ և լինել Որդի Աստուծոյ. բայց գիտեմ զքեզ Որդի Աստուծոյ, և պատկեր ճշմարիտ ուսուցող հօտիս փրկու՝ գնեալ արեամբն Աստուծոյ։ Թէ նոքա որ արտաքոյ գաւթիս մերոյ այլ ինչ ունիցին յայտնութիւն Հոգւոյ աթենական ումամբ տայցեն մեզ. և թէ որդիք Աստուծոյ՝ ասասցեն՝ ի բաց կացէք մշակդ անիրաւութեան. և թէ գոյ և գտանի ի նոսա այլ տեսող անճառելեացն՝ յայտնեսցեն զէութիւն Հօր, և զան հասանելի ծնունդն Որդոյն, և զորպիսութիւն ելսդութեան ամենասուրբ Հոգւոյն, և հաւանեսցուք որպէս մոլորեալք և անտեղեակք Աստուծոյ, և ասասուածայնոցն մինչև ցայժմ. Այլ գիտեմք և զօրէնս սիրոյն, որով գրեցիք հաճոյ լինել Աստուծոյ, և վասն թէ՝ հարկի խաչի վերատին։ Ո՛ հայր բանական և արդիւնական նա երանի յայնմ մասին թէ լինէր քաւութիւն, զի և կարօտիմք մարդասիրին գթութեան. բայց Քրիստոս մի անգամ խաչեցաւ, և այժմ իւրաքանչիւր ոք պարտի զանձն խաչել կարեաք և ցանկութեամբ հանդերձ, զի ի հուր փորձելոյ է ամենայն երկիր։ Զեմք մարդատեաց բնութեամբ, և ոչ հակառակ փրկութեան աշխարհի և գործոց Աստուծոյ. և ոչ տգիտանամք զառաջնորդս,

զվարդապետս լինել կարգաւորիչ և փրկիչ մարդկան. ահա թէ բան և ոչ ձայն, խորհուրդ Աստուծոյ և ոչ մարդկեղէն, և է ժամանակ ընդունելի և օր փրկութեան, և դուռն բացեալ մեծ աւետարանին. գնա այսուհետև աշակերտել զամենայն այլազգիս. նոր արարչութիւն Քրիստոսի և այլ խորհուրդ. գոչեա զօրութեամբ և մի խնայեար. ասա բարձր բարբառով. ոչ քարտիսիւ և մելանաւ, զոր ոչ առին հրաման ի Տեառնէ, այլ հետիոտս յարևմտից մինչև յարևելս, լնուլ զաւետարանն քրիստոսի. զի՞նչ աթոռ և ամրութիւն տղեկաց. ես իշխան ամենայն երկրի. գնալ՝ առիք հրաման ի Տեառնէ և աշակերտել. մի ցուպ մի գաւազան, մի պարկ, և մի պարեգօտս և ոչ նկարէնս յոտս և ոչ ողջոյն ի ճանապարհի. ահա Հարշիշք, Պարսիկք, Խոչակք, Լեկք, Թոնդրակիք, և ազգ՝ որոց ոչ ծագեայ ի նոսա լուսաւորութիւն փառացն Քրիստոսի. ապա առցես վարձս ի Տեառնէ և պսակ պարծանաց ընդ քարոզ բանին ճշմարտութեան, ոչ շինելով ի վերայ այլոց հիմանց. այլ ուր ոչ անուանեցաւ Քրիստոս։ Հոռոմք թէ ճշմարիտ՝ բաւական է նոցա քարոզութիւն բազմաց յառաջագոյն եղելոցն առ նոցա։ Ապա թէ ոչ ճշմարիտք, լինել պատրաստք տալ զպատասխանի ի պահանջել լապտերացն ձիթոյ, թէ ունին զղջանալ և լինել միագաւան. այսպէս և ոչ աւարտի ի ձեռն գրոյ. առ կայսր բողոքեցիք ի Հռոմն երթիցես. տուր առ նոսա հաւանութիւն բանիդ, և ամենայն ազգին Ֆռանգաց առ Աստրիս և քրիստոնէութեամբ պատուեալ մեծափառ եկեղեցիս Ըռուզայ. խնդրեալ զպատշաճս ի նոցանէ, և միով հաւանութեամբ թէ տայցեն, ճանապարհորդեա ի քաղաքն Կ. Պոլիս, տուր զմկրտութիւն լուսաւորութեան, և ըստ օրինաց նախնի քոց հարցն, օրհնութեամբ պսակեա զսուրբն Սոփիա, որ է այրք նոցա, և քրիստոսազարդ փառօքն զարդարեալ յարևմտից ծագեալ ընդ հիւսիսի, կոչել յորդեգրութիւն հաւատոյ սրբոյ աւազանին ծննդեամբ զբարեյաղթ քրիստոսապսակեալ թագաւորս մեր զսիրելի ամենեցուն. և այսպէս հաստատեալ պարծանս առ Աստուած՝ ասելով. «ահա ես և մանկունք իմ. եթէ ոչ այսպէս, վասն զի չէ և չէ իսկ, զի չև է Հոգի, և ոչ նշանք առաքելականք, և ոչ առաքեալք ընտրեալք և որոշեալք յառաջ քան զլի-

նել աշխարհի մարդկային մտածութեամբ և խորհրդով որպէս լինի և հաստատի, որ Աստուծոյ միայն է կարելի, ասեմք՝ քակտեցի որ առանց Աստուծոյ է։ Եւ դու քոյովքդ ամենեքումք, ունիս հանգչել ի տուն խրատու և իմաստութեան, որ է եկեղեցի սուրբ։ Եւ այս յայտնի լիցի ձեզ և ամենայն աշխարհի, զի եղբարքս կատարեալ Հաղբատ Սանահին այլօք որ են յաշխարհի, գրեաթէ և Աղուանք Այրարատեանք, Տարօն, Անի և Կարս, Արշարունիք և այլք ճշմարտեալք հաւատովք անբաժանելի և անմեկնելի են ի միմեանց, որպէս Պողոս ի Պետրոսէ, և Վասպուրական ոչ դառնայ ի լուր այսպիսի խռովութեան։ Զգիս նոցա ոչ պաշտեմք, և պատկերի ոսկոյ երկիրպագանեմք. թէպէտ և բարձրանայ բոց հնոցին Խթ. կանգուն, ակն ունելով Տեառն Աստուծոյ լինել ընդ մեզ թօթափել զհուրն կիզանող և բանալ յօրհնաբանութիւն զբերանս մեր ի ձայն գոհութեան՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Վասն շինութեան եկեղեցւոյդ մի ինչ ունիցիս ապաշաւանս, զի ոչ եթէ մարդկային յուսով սկսար, այլ Աստուծով և Աստուծոյ ընկեալ է, Տէր հաճեցաւ ի գործս քո, որպէս զխորանն ի ձեռն Բեսելիէլի, Աբրահամու և Նոյի, և գովոդք հրեշտակք, և նոյն ինքն Տէրն փառաց, ուրախ լեր և ցնծա՝ յիշելով զհեռացեալքս մարմնով ոգոյ յաղօթս սրբութեան ըստ հասարակ անօրինել զամենեսեան։

(Շարունակելի)։

Ա. ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ.